

«Նոր Արտամետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

դպրոցի տնօրեն՝ Մ. Կարապետյան

Հաստատում եմ՝

Digitally signed by KARAPETYAN MELKON 1411740076
Date: 2022.09.28 14:20:58 AMT

Հաստատում եմ -----/Մ. Կարապետյան/

15. սեպտեմբերի 2022թ.

ՀՀ Կոտայքի մարզ

Նոր Արտամետի միջնակարգ դպրոց

8-րդ դասարան

դասղեկ՝ Ն. Հարությունյան

2022- 2023

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N	ազգանուն	անուն	հայրանուն	Ծննդյան օր, ամիս, տարի	սեռը	Ընտանիքի սոցիալական վիճակը, անապահով. տեսակը
1.	Աթանեսյան	Ռուդիկ	Աթանեսի	08/07/2009	Ար	Միայնակ մայր
2.	Աղամիրյան	Մարիսաբել	Սերգոյի	23/12/2008	Իգ	բազմազավակ
3.	Աղայան	Աննա	Լևոնի	22/02/2009	Իգ	Սոցիալապես ապահով
4.	Անտոնյան	Մաթեվոս	Գագիկի	26/03/2009	Ար	Սոցիալապես ապահով
5.	Ավետիսյան	Սվետլանա	Արմենի	31/07/2009	Իգ	Միայնակ մայր
6.	Գրիգորյան	Անգելինա	Գագիկի	21/10/2009	Իգ	Սոցիալապես ապահով
7.	Զոհրաբյան	Դավիդ	Աշոտի	15/01/2009	Ար	Սոցիալապես անապահով
8.	Խաթայան	Հրայր	Մեծլումի	11/03/2009	Ար	Սոցիալապես ապահով
9.	Խաչատրյան	Մերի	Ալեքսանդրի	07/12/2009	Իգ	Սոցիալապես ապահով
10	Հակոբյան	Մարիամ	Մամիկոնի	01/03/2009	Իգ	Սոցիալապես ապահով
11	Ճաղարյան	Արտուշ	Կարենի	07/01/2009	Ար	Սոցիալապես ապահով
12	Մալաքյան	Միլենա	Մարգհասի	10/01/2009	Իգ	Սոցիալապես ապահով
13	Պրուտյան	Աիդա	Արմանի	01/01/2009	Իգ	Սոցիալապես ապահով
14	Սարոյան	Արտյոմ	Էդգար	27/09/2009	Ար	Սոցիալապես ապահով
15	Սրբեյան	Հարություն	Հովհաննեսի	05/02/2009	Ար	Սոցիալապես ապահով

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) _____ Դասարանը բաղկացած է 15 աշակերտից: Դասարանում կա 7 տղա և 8 աղջիկ : Դասարանում բավականին կայուն բարոյահոգեբանական մթնոլորտ է տիրում: Դասարանի սոցիալական պայմանները գրեթե հավասար են: Երեխաները ընկերական են, համախմբված, մասնավոր դեպքերում ծագում են կոնֆլիկտներ, որոնք հեշտությամբ հարթվում են: Դասարանի աշակերտների մեծ մասը ընդգրկված են տարբեր ուսումնական պարապմունքներում՝ մաթեմատիկական գիտելիքներ, համակարգչային գիտելիքներ, պար, սպորտ, նկարչություն և այլն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս ուսումնադաստիարակչական աշխատանքներն ուղղված են լինելու սովորողների առաջադիմությանն ու վարքին:

2022-2023 ուս .տարում դասղեկի աշխատանքային գործունեությունը ուղղված է լինելու .

- ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանը,
- հետևել աշակերտների հաճախելիությանը ,
- առարկայական ուսուցիչների հետ առաջադիմության բարձրացման ուղղությամբ համագործակցությանը
- աշակերտների կարգապահության հետևելուն
- աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպմանը,
- դասարանական ժողովների կազմակերպմանը
- կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքների կազմակերպմանը
- թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ այցելությունների իրականացմանը
- հանրագուտ աշխատանքի (դպրոցամերձ տարածքի մաքրում և այլն) կազմակերպմանը
- սովորողների ծնողների հետ աշխատանքների կազմակերպմանը

- ծնողների հետ անհատական զրույցների անցկացմանը
- ծնողական ժողովների կազմակերպմանը
- սովորողների սոցիալական պայմանների ծանոթացմանը
- սովորողների ընտանիքի կազմին ծանոթացմանը
- սովորողների բնակարանային և կենցաղային պայմաններին ծանոթացում

Այսպիսով կարելի է հստակ ընդգծել, որ դասղեկական գործունեության հիմնական խնդիրներն են.

- դասարանական կոլեկտիվի ձևավորումը,
- անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող հոգեբանամանկավարժական միջավայրի ապահովումը,
- առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորումը,
- սովորողների իրավունքներն ու շահերը պաշտպանելը,
- դաստիարակչական գործունեության բազմազան միջոցներով արդյունավետ հարաբերությունների համակարգի ստեղծումը,
- դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպումը,
- սովորողների, սովորողների և մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորումը,
- սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորումը,
- սովորողների ստեղծագործական, հասարակայնամետ գործունեության կազմակերպումը:

- **ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հայեցի դաստիարակությունը հիմնասյունն է ազգային հենքի վրա ձևավորվող հայ դպրոցում հաջողելու համար: Դաստիարակության այս ուղղությունը ենթադրում է ՀՀ դպրոցներում դաստիարակել հայրենիքի նվիրյալ, ՀԱՅԲՆԻՔ հասկացությամբ սնվող քաղաքացիների: Ամենօրյա աշխատանքների արդյունքում դասողեկի առաջ խնդիր է դրված սովորողի մոտ ամրապնդել սերն ու հարգանքը Հայաստան հայրենիքի հանդեպ, վստահություն ներշնչել նրա ապագայի նկատմամբ: Ցույց տալ, որ հայության գոյատևման ու զարգացումը հնարավոր է միայն սեփական հայրենիքում: Հայեցի դաստիարակությունը սկսովում և իր զարգացումն է ունենում է հայրենիքի ճանաչողության ճանապարհին: ՀՀ դպրոցն ավարտած ցանկացած սովորող, հասարակության մեջ ինքնադրսևորվող ցանկացած մարդ պետք է հստակ հասկանա, որ հայրենիքը հայոց արժեհամակարգի հիմնարար արժեքներից է:

<<Հայրենասիրությունը մարդկային բարոյական հատկություններն իր մեջ միացնող գերագույն առաքինությունն է, ազգերի գոյության անհրաժեշտ պայմանը, նրանց ուժի և մեծության անսպառ աղբյուրը>> (Գ. Նժդեհ)

• Հոգևոր դաստիարակություն

Յուրաքանչյուր երեխայի հոգևոր դաստիարակությունը սկսվում է ընտանիքում, շարունակվում դպրոցում և իր դրսևորումը գտնում հասարակության մեջ: Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման համար, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Սակայն այս կարևորությունը գիտակցելով հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար, երեխային քրիստոնյա մեծացնելու համար պետք է հաշվի առնել երեխայի զարգացման առանձնահատկությունները, հաշվի առնել առաջին հերթին նրա մտածողության, երևակայության և բարոյական ընկալումների զարգացման առանձնահատկությունները: Հոգևոր դաստիարակությունը փոխանցում է մեծապես

բարոյական արժեքներ և դրա նպատակն է բարոյական արժեքների սերմանումն ու յուրացումը: Սակայն կարևոր է ուսուցչի սեփական օրնակը այդ ընթացքում:

Երեխաներն ավելի լավ ընկալում են մեր վարքն ու պահվածքը, քան մեր հրահանգներն ու խրատները: Այդ պատճառով այս տարիքում հոգևոր դաստիարակությունը պետք է իրականացվի ոչ առանձին և ոչ հատուկ պլանավորված: Եթե տանը և դպրոցում լինի մանկական Աստվածաշունչ, նկարագարդումներով և երեխայի համար հասանելի, ապա այն հաստատ հետաքրքրություն կառաջացնի երեխայի մոտ:

Պետք է մշտապես հիշել, որ ավելի լավ է մտածել սեփական հոգևոր արժեքների մասին, մեր հոգևոր կյանքի մասին, նախքան սովորողների մեջ այդ արժեքները սերմանելու: Երեխաները կրկնօրինակում են մեր վարքը, և եթե մենք ապրում ենք բարոյական և քրիստոնեական արժեքների ներքո, ապա մեր երեխան կմեծանա որպես դրանց կրող մարդ:

- **Գեղագիտական դաստիարակություն :**

Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության (ճանաչողության) հիմնական նպատակներից մեկը: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է: Այն հաստատում է իրականության օբյեկտների հետ մարդու գեղագիտական հարաբերությունը, ձևավորում է նրա գեղագիտական զգացմունքները, ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը, ապահովում գեղագիտական ունակությունների, կարողությունների, հմտությունների և այլ որակների զարգացումը, ակտիվացնում, ընդլայնում և

բավարարում է գեղագիտական պահանջումները, գեղեցիկը ընկալելու և ստեղծագործելու հնարավորությունները: Գեղագիտական դաստիարակությունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները: Դպրոցի դերն է զարգացնել սովորողի մեջ գեղեցիկի հանդեպ սերը և այն գնահատելու կարողությունը:

Մտածող և զգացող մարդ դաստիարակելու համար, անհրաժեշտ է առաջին հերթին նրան դաստիարակել գեղագիտորեն: **Ֆրիդրիխ Շիլլեր**

Չի կարելի ճանապարհ տալ սերնդին առանց դրականի և գեղեցիկի սաղմերի: **Ֆեոդոր Դոստոևսկի**

- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Ռազմահայրենասիրական դաստիարակությունը և գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կոփված, բանակի մասին տեղեկացված ու պատրաստված սերունդ դաստիարակելու գործընթացը մեր օրերում առավել կարևոր և օրհասական է դառնում: Դասուցիկի ամենօրյա գործունեության մեջ կարևոր տեղ պետք է զբաղեցնի ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակը բարձրացնելուն ուղղված աշխատանքները: Համագերծակցելով դպրոցի զինղեկի հետ, մշակելով գործողությունների համակարգված ծրագիր, անհրաժեշտ է հասնել նրան, որ դպրոցը պատրաստի գրագետ, հայրենասեր զինվոր, ով բանակում ավելի կկատարելագործվի: Դպրոցն այն վայրն է, որտեղ երեխային պետք է հայրենասեր դարձնենք, այն վայրն է, որտեղ պետք է ստեղծվի այնպիսի մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր աշակերտ՝ անկախ իր ստացած դաստիարակությունից, կսնվի գիտակցված հայրենասիրությամբ, կճանաչի մեր պատմության դրվագները, մշակույթի գանձերը և կգիտակցի, որ ինքն արժանի ժառանգորդը, պահապանն ու փոխանցողը պիտի դառնա այս ամենի:

Ֆիզիկական դաստիարակություն:

<<Առողջ մարմնում առողջ հոգի >>խոսքերը ընդունելով որպես կարգախոս, դպրոցական առօրյայում կարևորում ենք ֆիզիկական դաստիարակությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, մրցույթներ, առողջության օրեր, որոնց շնորհիվ սովորողը կհասկանա Ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու

անհրաժեշտությունը, առողջության պահպանման և ներդաշնակ զարգացման կարևորումը: Կարգացնի սեփական առողջական վիճակի, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության հանդեպ հետևողականությունը:

Աշխատանքային դաստիարակություն : Դաստիարակության կարևոր ձևերից մեկը աշխատանքային դաստիարակությունն է : Ամենատարբեր աշխատանքների ընթացքում է երեխան ճանաչում ինքն, գնահատում շրջապատի հետ հարաբերվելու կարողությունները, իր ուժեղ և թույլ կողմերը: Այն մեծ ազդեցություն է ունենում մասնագիտական կողմնորոշման վրա, քանի որ աշխատանքի ընթացքում է ,որ յուրաքանչյուր մարդ պատանեկության և վաղ երիտասարդության տարիներին գտնում է այն աշխատանքը, որում առավել լրիվ և վառ կերպով բացահայտվում են նրա բնատուր ընդունակությունները, որը նրան ապագայում կբերի հոգևոր ստեղծագործության երջանկություն: Բացի այդ այն ամենից առաջ սիրո դաստիարակությունն է աշխատանքի նկատմամբ:

Բնապահպանական դաստիարակություն

Բնապահպանական դաստիարակությունը նշանակում է «մարդ-բնություն» համակարգում, բնության ներսում փոխադարձ կապերի բարելավում, բնության նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքի բարելավում, ինչպես նաև տեխնոլոգիայի և ռազմավարության գիտակցական մոտեցում: Բնապահպանական դաստիարակությունը հիմնականում իրականացվում է աճող սերնդի կրթադաստիարակչական աշխատանքներում, ըստ կրթական համակարգի տարբեր օղակների: Էկոլոգիական գիտելիքների ձևավորման չափանիշներն են կենդանական, բուսական և անկենդան աշխարհի մասին տեղեկությունները:

Բնապահպանության մասին գիտելիքների մակարդակը ստուգելու նպատակով առաջարկվում նե իրականացնել հետևյալ հարցադրումը.

1 . Ի՞նչ է բնությունը:

2 . Գիտության զարգացման ընթացքը:

3. Ի՞նչ է նշանակում էկոլոգիական ճգնաժամ:

4. Բնությունը և մարդը կարո՞ղ են լինել բարեկամներ և թշնամիներ:

5. Ո՞րն էք առաջնահերթ համարում՝ բնապահպանություն՞նը, թե՞ գիտության զարգացումը:

6. Ինչու՞ են մարդիկ շարունակում օգտագործել բնության բարիքները, թեև հասկանում են, որ այն սպառվում է, որից իրենք հայտնվում են վտանգի մեջ, կործանման եզրին: Ձեր կարծիքը:

7. Ինչպե՞ս կվարվեիք Դուք, եթե լինեիք աշխարհի տնտեսվարը՝ աշխարհի համար հիմնախնդիր դարձած վերը նշված հարցերը լուծելու համար, և ո՞րը կնախընտրեիք՝ շահու՞յթ, բնապահպանություն՞ն թե գիտության առաջընթաց՞: Ձեր կարծիքը:

ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթները	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I			
II			
III			
IV			
V			
VI			
VII			

VIII			
IX			
X			
XI			
XII			
XIII			
XIV			
XV			
XVI			
XVII			
XVIII			
XIX			
XX			
XXI			
XXII			
XXIII			
XXIV			
XXV			
XXVI			
XXVII			
XXVIII			
XXIX			
XXX			
XXXI			
XXXII			
XXXIII			
XXXIV			

տարեթիվը			

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Դասարանի ծնողական խորհրդի կազմը

	Ազգանուն, անուն, հայրանուն	հասցե	հեռախոս
Նախագահ			
անդամներ			
անդամներ			
